և զայլ թուղթս՝ մատուցէք այսր, զի ընթերցեալ քննեսցին, և ըստ պատշաճին արձանագրեսցին. լուեալ զայսոսիկ Հայոց՝ մեկնեցան անտի։ Եւ 'ի վաղիւ անդր յանդիման լեալ ատենին մի առ մի ետուն պատասխանի որ ունէր օրինակ զայս։

1°.—Գերեզմանն Քրիստոսի իւր սարօք բաժանորդութեամբ էր 'ի մէջ Հայոց և Յունաց՝ զօրութեամբ դաշնագրոյն Օմարայ և Սալահատտինի, և հրովարտակաց Սէլիմայ և այլոց առաջին Թագաւորաց, և Սուլթանացն Եգիպտոսի. Լատինք յետ ժամանակաց եղեն բաժանորդ նոցա, և այսօր է 'ի ձեռս երից ազգաց՝ ըստ հրովարտակաց Մահմուտայ Արքայի։

2°.—Պատանատեղին Քրիստոսի, դարձեալ զօրութեամբ նոյն գրոց սեփհական էր ազգին Հայոց. Յոյնք և Լատինք զկնի ժամանակաց եղեն բաժանորդ նմին հրովարտակաւ, և այսօր է ընդ հսկողութեամբ երից ազգաց։

3°.—Գերեզմանն Ս. Աստուածածնի, զօրութեամբ դաշնագրոց եւ հրովարտակաց 'ի Սէլիմայ մինչեւ ցՄահմուտ Արքայ, ընկերութեամբ է 'ի մէջ Հայոց եւ Յունաց. Լատինք չունին անդ իրաւունս, և 'ի հրովարտակի նոցին չերեւի յիշատակութիւն ինչ, եւ այսօր չունին հաղորդութիւն տեղւոյն այնորիկ։

4°.—Այրն Բեթղեհէմի ընկերութեամբ է 'ի մէջ Յունաց և Հայոց՝ զոր հաստատեն բազմաթիւ վաւերական գրեանք. իսկ Մսուրն սեփհական էր ազգին Հայոց, և ունիմք վասն այնր վաւերեալ թղթեանս, բայց Լատինք նենգութեամբ յափշտակեցին զայն 'ի ձեռաց Հայոց, այժմ պահանջեմք զիրաւունս մեր. այսօր բաժանորդ են Այրին Հայք և Յոյնք, և Մսուրն 'ի ձեռս Լատինաց, և հիւսիսային դուռն յատկացեալ Հայոց։

5°.—Եկեղեցին Բեթղեհէմի՝ յերկաթեայ դրանէ մինչեւ 'ի տեղին Ծննդեան ընկերութեամբ է Հայոց եւ Յունաց, որպէս հաստատեն զայս բազմաթիւ հրովարտակք և Հէօճէթք դատարանի. Լատինք չունին անդ իրաւունս, թէ և ամբաստանեցին քանիցս՝ այլ ոչ եղեն լսելի։

6°.—Փակեալ դուռն 'ի հիւսիսային կողմն եկեղեցւոյն սեփհական է Հայոց. Լատինք յառաջադոյն գտեալ պա-